ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 158 14 սեպտեմբերի 2021թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Խաչատրյանին

Կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ավագանու N22, N23, N24, N 25 և N 26 որոշումները :
Առդիր 5 էջ:

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» սեպտեմբերի 2021թ. N 22

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Քարաձոր համայնքի ավագանու 2021թվականի սեպտեմբերի 9-ի արտահերթ նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Քարաձոր համայնքի 2021 թվականի սեպտեմբերի 9-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Քարաձոր համայնքի 2021 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին
3. Քարաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին
4. Համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը մրցույթով 25 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրելու մասին
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ վաճառքով օտարելու մասին

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կարապետյան Արսեն Ա.		-	-
Կարապետյան Արսեն Ս.		-	-
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար՝ Հ.Ռոստոմյան

գ. Քարաձոր 2021թ. սեպտեմբերի 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» սեպտեմբերի 2021թ. N 23

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ Քարաձոր համայնքի 2021թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությանը (հողային հաշվեկշռին) համաձայն հավելվածների (22 և 22ա ձևերի):

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կարապետյան Արսեն Ա.		-	-
Կարապետյան Արսեն Ս.		-	-
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար Հ. Ռոստոմյան

գ. Քարաձոր 2021թ 09 սեպտեմբերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» սեպտեմբերի 2021թ. N 24

ՔԱՐԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 13-րդ դ կետով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ և 31-րդ կետերով, հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի » 24.08.2021թ. թիվ 183 դրական եզրակացությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է.

1.Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից 06-109-0016-0009 կադաստրային ծածկագրով 0.01275 հա կապի հողեր բնակավայրի հողեր նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություն:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կարապետյան Արսեն Ա.		-	-
Կարապետյան Արսեն Ս.			
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

գ.Քարաձոր 2021թ. 09 սեպտեմբերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» սեպտեմբերի 2021թ. N 25

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ 25 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04. 2001թ. թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է .

1. Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ 06-109-0119-0011 ծածկագրով 3.836484 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրը, մեկնարկային գինը 22000 ՀՀ դրամ, 06-109-0105-0073 ծածկագրով 0.278615 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրը մեկնարկային գինը 3000 ՀՀ դրամ մրցույթով 25 տարի ժամկետով տրամադրելուն:

2. Մրցույթի մասնակցության վճարը 2000 ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և նվազագույն քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթով տրվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կարապետյան Արսեն Ա.		-	-
Կարապետյան Արսեն Ս.			
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

գ. Քարաձոր 2021թ 09 սեպտեմբերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» սեպտեմբերի 2021թ. N 26

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ հոդվածի 3-րդ կետով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04. 2001թ. թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է .

1. Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ 06-109-0202-0002 ծածկագրով 0.344834 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը, մեկնարկային գինը 520000 ՀՀ դրամ, աճուրդ վաճառքով օտարելուն:
2. Աճուրդի մասնակցության վճարը 2000 ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդով վաճառվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կարապետյան Արսեն Ա.		-	-
Կարապետյան Արսեն Ս.			
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

գ.Քարաձոր 2021թ. 09 սեպտեմբերի